

ԱԳԱՐԱԿԱԶՈՐ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդրանիկ Գալստյան

Հեռախոս՝ +375.99.66.55

Բնակչություն՝ 1408

Համայնքի վարչական տարածքը համապատասխանում է Ագարակաձոր գյուղին: Գտնվում է Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում: Եղեգնաձոր քաղաքից գտնվում է մոտ 3կմ հարավ և հեռավորությունը Երևան քաղաքից 119կմ է: Գյուղը հիմնադրվել է 19-րդ դարի սկզբին, թեպետ հիշատակվում է նաև 12-13-րդ դարերի մասին: Նախկինում գյուղն ունեցել է Այար, Ագյար անվանումները: Վերանվանվել է 1946թվականին: Գյուղը գտնվում է Արփա գետի ձախ ափին, նրա վտակ Ագարակաձորի գետաբերանի շրջանում: Ծովի մակարդակից ունեցած բարձրությունը կազմում է 1120մ: Կլիման մերձարևադարձային է՝ չոր, ցամաքային, ամառները՝ շոգ, ձմեռները՝ ցուրտ: Տարեկան տեղումների քանակը 300-350մմ է: ԲՆական լանդշաֆտները կիսանապատներ և չոր տափաստաններ են, որոնք վերամշակվել են՝ վերածվելով կուլտուր-ոռոգելի լանդշաֆտների: Այն պատմականորեն եղել է Օրբելյանների կալվածքը և պատմական այս ժամանակահատվածը դիտվում է որպես Վայոց ձորի ամենաձաղկուն շրջանը: Տնտեսական կյանքի և առևտրի զարգացման համար մեծ մշանակություն տալով ճանապարհաշինությանը, Տարասայիճ Օրբելյանը(13-րդ դար) կառուցել է մի քանի քարավանատներ և կամուրջներ, այդ թվում նաև Ագարակաձորի կամուրջը, որը կանգուն է և գործում է մինչ այսօր: Այժմ այդ կամրջի միջոցով են Եղեգնաձոր քաղաքի հետ կապ հաստատում Արփա գետի ձախափնյա շատ գյուղեր: Բնակչությունը ներգաղթել է ռուս- պարսկական պատերազմի տարիներին Պարսկաստանի Խոյ, Սալմաստ գավառներից , ինչպես նաև Մակուից: 1838թ.-ին ունեցել է 216, 1980թ.-ին ` 930, 2001թ.-ին` 1204 բնակիչ: 2011թ.-ի դրությամբ Ագարակաձոր համայնքի բնակչությունը կազմում է 1508 բնակիչ, որից առկա բնակչության քանակը` 1297, ժամանակավոր բացականեր` 94, երկարատև բացականեր` 117: Համայնքն ունի 340 տնտեսություն: Համայնքի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար: Մշակում են հացահատիկ, կերային մշակաբույսեր և բանջարաբուստանային կուլտուրաներ: Զբաղվում են անասնապահությամբ, բուծելով խոշոր և մանր եղջերավոր անասուններ: Արոտավայրերը զբաղեցնում են 912հա տարածք: Պահուստային հողերը յուրացվում և օգտագործվում են որպես վարելահողեր: Արդյունաբերության հիմքը սննդարդյունաբերությունն է: Գյուղում գործում են <<Ջերմուկ>> հանքային ջրերի մեկ գործարան, երկու քարի մշակման արտադրամաս, որոնք օգտագործում են Գնիշիկից և Միսիանից բերված հումքը: Համայնքի տարածքում հայտնաբերված է տուֆի հանքավայր, բայց այն ունի պահուստային նշանակություն և չի շահագործվում: Ագարակաձոր համայնքում գործում է միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժկետ և կապի հանգույց: